

ՀՆՁՍԿ

ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ Մ. ՍԻՄՕՆ ՊԷՅԻ ՎՐԱՅ.— ԿՈՒԻ ԵՐԱՍԻԱՅՈՒՄ.— ԿԱՍԱԳԱՆ.

Ե Ռ Ա Ղ

Ծանր դէպքերը յաջորդում են միմեանց: Հէնց այն ժամանակ, երբ Ամասիայում մի չափազանց անհաւասար ու արիւնահեղ կռւի մէջ, բաջաբար դիմադրելուց և թշնամիներից մէկ-երկու հոգի սպանելուց յետոյ նահատակ է ընկնում մեր ազնիւ ընկեր Միհրան Մանիսաճեանը, մէկ ուրիշ տեղ, Եօզղատում, որ հազիւ մի քանի ամիս առաջ տեղացի հայերի ապստամբութեան թատր էր, սուլթանի հրամանով կրկին կանգնում են կախաղանը և մեր մէկ ուրիշ անմոռանալի ընկեր՝ Գալուստ Մօրուքին հանում նրա վրայ թուրք կառավարութեան այդ վերջին օրինական սպանութիւններից իւրեւ հակահարուած մէկ օր Եօզղատում կախված է գլուխը տեղական արիւնարբու միւլթի թիւն. ապա նոյն այդ ժամանակները տեղի է ունենում խորէն պատրիարքին սպանելու անաջող փորձը և յետոյ, վերջին շաբաթվայ մէջ, Կ. Պօլսում, Ղալաթիոյի բաղձամարդ մի վայրում, օրը ցերեկով յեղափոխական ուժովիցն է պայթում ազգամիջառ նշանաւոր Մարգարտ Սիմօն պէյի վրայ և յեղափոխական դաշոյնը խրվում նրա կուրծքը, այդ մարդու, որ հայոց գործերի նկատմամբ Բ. Գուան աջ ձեռքն է: Որպէս կառավարութեան կողմից, նոյնպէս հայ յեղափոխականների կողմից այդ իրար դէմ գործադրված պատիժները միմեանց յաջորդում են մի սոսկալի շարքով և իրանց մէջ կրում մի սոսկալի տրամաբանութիւն: Թուում է, թէ երկու իրար հաւասար ոյժեր են կռւի մէջ միմեանց դէմ, և սակայն ինչքան տարբերութիւն այդ ոյժերի և նրանց իւրաքանչիւրի յատուկ հանգամանքների մէջ: Եւ այդ դրութիւնից մի բան ահնայանի կերպով առաջ է գալիս և պէտք է շատ մտածեցնել տայ մեր պսակակիր բաշխօգուկ թշնամուն: Դա՛ այն է, որ մեր, յեղափոխականներիս, կամքն ու վճռականութեանն անընկճելի է այլ եւս, և տանջանքների, սպանութիւնների, հալածանքների, նահատակութիւնների այն երկար, սարսափելի շարքը, որին ենթա-

կայ ենք մենք վայրենի կառավարութեան կողմից, ո՛չ միայն չէ կարողանում զսպել մեր կամքն ու վճռականութիւնը և անկարացնել մեր կարգերը, այլ և ընդհակառակը, նա, կառավարութիւնն անընդունակ է յայտնելու մեզ հետ կռելու, և մեր կարգերը գնալով՝ աճում են շարունակ: Ապացոյց դրան այն, որ 1890 թ. սկսած, Երզրումի և Գում. Գալուսի դէպքերից, հայ յեղափոխական այդ առաջին շարժումներից ի վեր, յեղափոխական տագնապը Հայաստանում անընդհատաբար ընդունել է աւելի ու աւելի մեծ ծաւալ ու խորութիւն, յեղափոխական ոգին ընդհանրացել է ժողովրդի ամեն խաւերում և յեղափոխական դէպքերը, ձեռնարկներն ու շարժումներն անընդհատ կերպով միշտ աւելի ու աւելի բազմաթիւ են դարձել և այդպիսով գրկել ամբողջ Հայաստանը: Այդ երկիրն այժմ նմանում է այն ջղային հիւանդին, որի ինչ տեղը ձեռք տալու լինես՝ ցաւ է զգում: Այսօր ասիական բռնակալ կառավարութիւնը Հայաստանի որ անկիւնն էլ թափանցում է յեղափոխական է գտնում և ամեն կողմ կամ խուլ խլրտուումներ է տեսնում, կամ համարձակ բողոքներ, կամ յեղափոխական բացարձակ շարժումներ ու ապստամբութիւններ: Թուրքական ընթիմը, այժմ, այլ եւս յուսահատ կերպով հիւանդ է: Դա մօտենում է իր վախճանին: Մեր պարտականութիւնն է շտապեցնել այդ, և արդէն իրերի ընթացքը և զարմանալի տրամաբանութեամբ միմեանց յաջորդող դէպքերն օգնական են մեզ:

Այսպէս, այդ քառամեայ մենամարտութիւնն, այդ արիւնայեղ tête à tête-ը ո՛չ թէ չէ դադարում, այլ եւ ընդունում է — երկու կորմից էլ — աւելի սպառնական կերպարանք: Հայաստանի մի քանի գաւառներում տիրող սովն աւելի կը ստուարացնէ յեղափոխականների շարքերը, և թուրքական անբարոյականացած, անկարգապահ, վախկոտ ջորքերը չեն, որ կարող կը լինեն յզսպել յեղափոխական ընդհանրացած շարժումները և սովից, թըշուռութիւնից, բռնութիւնից, հալածանքներից մոլեգնած ու յուսահատված ժողովրդային բազմութեան: Ապագան պատրաստում է դեռ աւելի ահաւոր դէպքեր:

Արիւնը պէտք է հոսէ սոսկալի առատութեամբ: Վերջին չորս տարւայ ընթացքում թափված արիւնն արագ, ան-
իմանալի, խիստ կերպով զարգացրեց, առաջ մղեց այդ
ժողովրդային դատը: Արիւնը, որ պէտք է հոսէ այսու-
հետեւ, աւելի մեծ չափով կանէ մեզ նոյն ծառայութիւ-
նը: Հետեւաբար, մենք չենք, որ յետ կը կանգնենք —
թէկուզ ամենածանր զոհողութիւնների գնով — մեր տա-
րիներէից ի վեր միանգամ ընտրած ճանապարհից: Գա այն
ողբերգական ճանապարհն է, որով — սլաւոնական
այնտեղ է՝ մեզ այդ հաստատելու համար — անցնում են
ժողովուրդները, ցրվելով նրա վրայ իրանց շարքերից ան-
համար դիակներ, կործանելու համար հնացած, փաած
շէնքերն իրանց ծանր դրութեան, ջարդելու իրանց
ստրկական շղթաները և հասնելու այն նպատակին, որ
նրանց համար կառուցանում է մի նոր դրութեան հաս-
տատուն չէնքեր — կարելի բարօրութեան ամենամեծ չա-
փը: Գա՛ ճանապարհն է անցեալից դէպի ապագան, որ
ճակատագրական է այն ամեն ժողովուրդների համար, ո-
րոնց կեանքի պահանջները նրանց մղում են դէպի ա-
ւելի առաջադիմութիւն, աւելի զարգացում:

Վերկայ ըստին հայ ժողովուրդի և մասնաւորապէս յե-
ղափոխական, Հնչակեան, մարմնի փորձութիւնների ամե-
նածանր ըստին է: Հայ ժողովուրդը, որ այսօր այլ եւս
բոլորովին յարած է մեզ, յեղափոխականներին, կարի-
անայ սրտով, աւելի կը զօրացնէ իր եռանդը, ցոյց կը
տայ այն աննման հերոսութիւնը, որ յատուկ է միայն
ժողովրդային բազմութեան, և մեզ հետ միասին կարող
կը լինի անվճատ ու արի կերպով անցնել ամեն փորձու-
թիւնների բովից և չի ընկրկել ոչնչի և ոչ ոքի առջև:
Հայ ժողովուրդն արդէն խոր կերպով համակված է յե-
ղափոխական գաղափարով, որ նոյն իր կենսական պա-
հանջներից առաջացած գաղափարն է, և այսօրանից ի
վեր աւելի, քան երբ և է պիտի ունենայ մէկ ընդհանուր
նշանաբան — առաջ: Այդ խօսքը — մենք այն կաղա-
ղակենք ամեն տեղ լինի այդ սովից հարուած ստա-
ցած գիւղում, լինի այդ լեռներում հայ ապստամբնե-
րի մէջ, լինի այդ քաղաքում, — ժողովրդային բազմու-
թեան մէջ, պատերազմի դաշտում: Այդ խօսքն այժմ
պէտք է լինի միացման կոչնակն այն ամեն ոյժերի հա-
մար, որոնք անկեղծ են եւ ընդունակ մղելու այն պատ-
մական մարտը, որ այսօր գտնվում է իր կրիտիկական
ընթացքից մեկում: Այսօր աւելի, քան երբ և է այդ մար-
տը պէտք ունի հայութեան կուռի ու մարի ամեն կենդանի
ու թարմ ոյժերի միահամուռ զօրութեան, և բռնութիւնը
չէ, որ կարող կը լինի յաղթել այդ զօրութիւնը: Այդ մար-
տը մեծ է և մենք կը լինենք, որ բարբարոս կառավարու-
թեան հետ մղած մենամարտութեան մէջ կունենանք վերջին
խօսքը, շարտելով այն՝ մեր յաղթված թշնամու ամօթահար
երեսին:

Մ Ի Հ Ր Ա Ն Մ Ա Ն Ի Ս Ա Ճ Ե Ա Ն

(Կենսագրական տեղեկութիւններ)

Հայ յեղափոխութեան պատմութեան էջերում
սուրբ արիւնով իր անունն անմահացրեց այդ 21 տա-
րեկան ռեուհաս երիտասարդը — Մ Ի Հ Ր Ա Ն Մ Ա Ն Ի-
ս ա ճ ե ա ն ը, Հնչակեան Կուսակցութեան յայտնի գոր-
ծիչներից մին: Ամասիայի ամենայնուզված ժամանակը,
երբ ոմանք իրանք իրանց անձերից կասկածելով, խոյս
էին տալիս գործի ասպարէզից, Մ Ի Հ Ր Ա Ն ը, ամենակասկածելի
դառնալով հանդերձ, չուզեց դատարան դառնալ: Ինքը մի-
ջակ դատաւարի բարեկեցիկ մէկ ընտանիքի զաւակ,
կարող էր ամենայն հանգստութեամբ անցնել իր օրերը,
բայց մի ներքին գորութիւն և աւելի մի վսեմ շարժա-
ռիթ մղում էր նրան դէպի մի սուրբ նպատակ: Գաղա-
փարված լինելով ժողովրդի դատի հաստատ համոզում-
ներով, անկարելի էր յուսահատեցնել նրան. նրա ամ-
բողջ ուշադրութիւնը դրաւել էր հայ աշխատաւոր դա-
տաւարդը, ռաւիկը: Նա դեռ ուսանող Մարգուսն քա-
ղաքի Ամերիկեան Բօրտ Ընկերութեան Անատոլիա Կոլէ-
ջում, հետաքրքրվում էր ընկերական կեանքի անհաւա-
սարութեամբ: Միտիոնարների խորամանկ աչքերը նկա-
տեցին այդ «միասակար գաղափարը» (?), բայց իրանց
միտիքական ընթացքը և ձեռք առած ազդու միջոցնե-
րը չը կարողացան դէմ դնել այդ ն ո Ր հ ո ս ա ն ք ի ն,
որը ներս էր թափանցել այդ կողմերը: Մ Ի Հ Ր Ա Ն ը իր ամ-
բողջ գոյութեամբ նուիրված սուրբ գաղափարին և ին-
քն իրան յանձնած նոր հոսանքին, առաջ էր գնում:
Գաղափարի դահիճները տեսնում էին այդ եւ կատա-
ղում: Քրիստոնէական բարոյականի այդ փարիսեցի վար-
դապետները, որոնք արհամարհում էին իրանց աշակերտ-
ներին և նրանց վրայ նայում իբր ամենատարբեր և անըն-
դունակ անհատների վրայ, տեսնելով նրանց նոր ձգտում-
ները, զարմացան և զայրացան: Տգէտի զաւակը շարժ-
վում էր, խլրտում էր. նա հետաքրքրվում էր իր միջա-
վայրով, նա խոյս էր տալիս իր վրայ ճնշող ջեզուիտ մի-
տիոնարների չոր ու ցամաք վարդապետական, անխմատ
քարոզներից. նա միաժամանակ բողոքում էր անխնա-
նութեան դէմ, քննադատում էր սուլթանին և վերջին
ծայր դժգոհ էր երևում տիրող լուծից և որ աւելին է,
յանդգնում էր գանգատվել Ամերիկեան ինքնակոչ լուսա-
ւորիչների ընթացքի դէմ: Օ՛, այդքան ինքնաճանաչութիւ-
այդ արհամարհված տարրում... Իրաւ որ անտանելի էր Ա-
րեւմտեան «առաքելային» արեւելեան «վայրենիւնե-
րի» այս աստիճան աներեսութիւնը. հետեւաբար, նրանք
սկսան կանչել Մանիսաճեանի և Գաղատիայի Գատում
ամբաստանվածներից՝ ճիւղանանի նման «ստահակներին»
և ուղղութեան հրաւիրել: Մ Ի Հ Ր Ա Ն ը լսում էր նրանց ան-
իմաստ ու այլանդակ տրամաբանութիւնը և լուռ ծիծա-
ղում: Յուսահատված կեղծ քրիստոնեաներն ազատ շունչ
քաշեցին, երբ 92 Յուլիս 4-ին նրանց տալով մի-մի
կտոր թուղթ, որ ընթացաւարտի դիպլոմ է կոչվում,
դուրս ուղարկեցին Կոլէջից:

Լրացնելով Կօլէջի ընթացքը և սովորելով հայերէն, տաճկերէն և անգլիերէն լեզուները, Միհրանը դարձաւ Ամասիա՝ իր ծննդավայրը։ Նա շատ մատաղ հասակում կորցրած էր իր հայրը։ Ինքը լինելով ընտանիքի անդրանիկ զաւակը, իր այրի մայրը նրան էր սպասում իր երկու փոքրիկ տղայ և մէկ աղջիկ զաւակներով։ Այրի մայրն ուրախանում էր վերջնական, որ կարողացել էր գտնէ միջակ կրթութիւն տալ իր անդրանիկին։ Թիւրքիայում այդքան մտաւորական պաշարով եւ մի քիչ էլ դրամագլխով մարդ կարող է, եթէ իր մէջ քաղաքական խիղճը մեռցնէ, երջանիկ կեանք անցկացընել։ Միհրանի համար այդ երկուսն էլ չէին պահանջուի։ Նա զբաղւում էր ուրիշ խնդիրներով։ Նրա երեւակայութիւնը ձգվում էր դէպի հեռավոր ապագան, հայկական յեղափոխութիւնը։ Նա իր երջանկութիւնը նկատում էր իր ընկերների երջանկութեան մէջ, հետեւաբար, հոգւով եւ մարմնով անձնատուր եղաւ յեղափոխական գործունէութեան։ Նրան դիմաւորեց թիւրք բռնակալութիւնը եւ սկսաւ լրտեսել նրա ամեն-մի քայլը, շարժումը։ Վերջնական յայտնի տաճկական «յայտարարութիւնների» խնդրով շատերի հետ նրան եւս նոտեցրին բանտ։ Ամենախիստ խուզարկութեան ենթարկեցին իր բնակարանը և ոչինչ չը գտան, գրաւեցին նրա գրքերը միայն և մի քանի առիթ առանց որ եւ է յանցանքի բանտում պահելուց յետոյ, ազատ արձակեցին՝ խիստ հսկողութեան տակ։ Բանտն աւելի եւս գրգռեց նրան վատ կառավարութեան դէմ։ Զը նայած աննպաստ հանգամանքներին, նա գործում էր, քարոզում էր, մի կերպ խոյս տալով թիւրք եւ հայ լրտեսների դիտող աչքերից։ Սակայն այս տեսակ գործունէութիւնը չէր գրաւում էր նրան։ Նա, այդ 20 տարեկան փափուկ պատանին, սիրում էր եւ ասպատակային չարքաշ կեանքը։ Հետեւաբար, չը բաւականանալով իր տեսական քարոզներով, զէնք վերցրեց եւ համարձակ կերպով մտնելով ժողովրդի խաւերում, սկսաւ իր գործնական կեանքով քաջալերել նրանց։ Նա երկարահասակ էր եւ ջրհուտ, ունէր շատ գրաւիչ դէմք։ Իր ամեն-մի խօսքը մեծ ազդեցութիւն էին գործում իր ունկնդիրների վրայ։ Նրա ասպարէզից յանկարծական աներեւոյթանալը գրաւեց տեղական կառավարութեան ուշադրութիւնը, որ սկսաւ փնտռել նրան, ամեն կողմ վիտտում էին հոյ ու թուրք լրտեսները, բայց տասն ամիս պարապը գնացին կառավարութեան բոլոր խորամանկ ձեռնարկութիւնները։

1894 մարտի վերջերում մէկ օր, երբ նա գտնվում էր իր տանը, յանկարծ, մատնութեամբ թէ պատահամբ, այդ յայտնի չէ տակաւին, պաշարում են նրա բնակարանը։ Շիրմանցիների, չէրքէզների և տեղային թիւրք պաշտօնականների 400-ի չափ մի բազմութիւն, միւլթսալը՝ Պէքիի փաշայի հրամանատարութեան ներքեւ գընդակահարում էր չէնքը ամեն կողմից։ Ոչ մի յոյս չէր մնացած։ Միհրանը ստիպված էր դիմադրել եւ մի յուսահատական կռից յետոյ նա, գնդակ ընդունելով իր կրծքից, ընկաւ անկեղծաբան, իր արեան վրէժը կտակելով հայ երիտասարդներին, որպէս ժառանգ և ինքն առաւ, կուռում սպանելով մէկ-երկուսին...

Հանգիստ քեզ, մեր սիրելի ընկեր։ Դու զոհ գնա-

ցիր պաշտած դաշափառիդ, տառապված ժողովրդի ցաւերի համար։ Եթէ նա չը ծանաչէ իր հերոսը, եթէ նա ապերախտ գտնվէ դէպի իր արդար բողոքների կամաւոր զոհը, դու ունես քո անմահութեան յիշատակարանները — քո ընկերներն ու պատմութիւնը։ Առաջինները նուիրում են քեզ իրանց սրտերը, դու միշտ անջնջելի ես այնտեղ, քո սուրբ յիշատակը պստկեցացած է նրանց մէջ վեհ ու վսեմ կերպարներով։ Նրանք քեզ սիրում էին, երբ կենդանի էիր և այժմ պաշտում են, երբ անարգ բռնկալութիւնը նահատակեց քեզ, սրբացնելով քո անունը։ Իսկ պատմութիւնը նուիրում է քեզ իր էջերը։ Նա պէտք է կտակէ քո նուիրական յիշատակն ապագայ սերունդներին։ Թիւրքաց արեւնաբուր Ալի սալանը լողանալով քո և քեզ նման երիտասարդների տաք արեան մէջ, տեղի է տալիս վրէժիմոլութեան, ապագան պէտք է լուծէ նահատակների վրէժը։ Ժողովուրդն իր արեւնով պէտք է խեղդէ սուլթանի բռնութիւնը և այդ ապագան շատ մօտ է։

ԱԽԲԱՐ — ՌԱՄԻԿ

Թ Վ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՆԱԽԿԱՆԵՐ ԹԻՒՐԿՈՒՆՅՈՒՆ

ՏԵՌՈՐԵԿԱԼԵ ՄԻՄԵՆՆԻ ԳՈՐԾՈՂ ՈՒԹԻԻՆ

ՍԱԳՍՈՒՏ ՍԻՄՈՆ ՊԵՅ ՎԵՐԱԿՈՐՈՒՄ

Կ. Պօլիս, 10 մայիս 1894.

Այսօր երեքշաբթի 10—22 մայիս, առաւօտեան ժամը Ը. Թ. 3-ի (Ը. Ե. 10 եւ կէս) միջոցները, երկու անձանց ժողովրդի, որոնք բռնակրի հագուստներ հագած էին, Ղալաթիոյ հրապարակին վրայ, խաւեար խանի մօտ յարձակեցան քաղաքական ժողովի Ատենապետ Մադսոն Սիմօն Պէյի վրայ, եւ անոնցմէ մին դաշոյնով վերաւորեց նորա կուրծքը, միւսն ալ օճիւղէրի հարուած մը պարպեց. գնդակը դպաւ ազդէն քիչ վեր։ Փախուստ տուած ժամանակին երկու երիտասարդներն ալ բռնուեցան եւ անմիջապէս տարուեցան պալատ։ Սիմօն պէյ արիւնջուայ գետին ինկած էր։ Ահագին բազմութիւն խոնուեցաւ անմիջապէս։ Սուլթանը իր լրտեսապետը եւ բազմութիւն լրտեսներ ու ոստիկաններ, կառավարական բարձրաստիճան պաշտօնատարներ փութացուց գործողութեան վայրը։

Ղաւաճան մատնիչապետին վերաւորման լուրը խիստ մեծ եւ խոր տպաւորութիւն թողած է բոլոր շրջանակներուն վրայ։ Մանրամասնութիւնը յառաջիկային։

ԿԱՑԻՆ.

ԸՐԻՒՆԱՀԱՂ ԿՌԻՒ ԱՄԸՍԻՆՈՒՄ

Եմասիա, 15 ապրիլ 1894.

Պուզամ նկարագրել ձեզ Ամասիայի մեծ ու արիւնջալի կռիւը, որ պատահեցաւ 1894 մարտ 25, տաճկաց արիֆէյին (պայրամէն մէկ օր առաջ), առաւել կա-

պիտի մեռնին: Այս գիւղեր թէեւ վանէն հեռի են երկու օրուան ճանապարհով սակայն իրենց շուրջ ունին Արճէշի եւ Աւջա վազի գայմագամութիւնները, բայց ասոնց կողմանէ երբեք միջամտութիւն չէ եղած, և արդէն յայտնի է թէ այդ գէպքի հեղինակը կառավարութիւնն ինքն է: Այդ աւերուած գիւղեր այնքան աղքատներ էին, ժողովուրդն ալ աշխատասէր, որ գրեթէ վանի հասարակութեան բոլոր ցորենը ինք կը մատակարարէր, բայց այժմ զրկված ըլլալով ամեն բաներէ եւ պարպված մշակ ժողովուրդէն, այդ գիւղերի արտերը մնացած են անխնամ: Սովին անմիջական եւ կատաղի կերպով երեւան գալը այժմէն զգալի է արդէն:

Վերջիշեալ գիւղերու մէջ քիւրդերը զուարճութեան կամ զբօսանքի համար գիւղացի հայերէն մին կը կանգնեցնեն տիղմի մէջ և կը պատուիրեն, որ շիտակ կայնի. յպետք է քեզ նշանի առնենք, կեա՛վուր՝ կըսեն. բայց դեռ քիւրտերը հրացան չարձակած, խեղճ հայը վախէն կը մեռնի և գետին կիցնայ:

Ո՞ր մէկը գրենք: Գիւղերը բոլորովին լմացան, ումանք աղքատացան, ումանք աւերակ դարձան, մնացածներն ալ այսինչ կամ այնինչ քիւրդ պէյի լիրբ կամբին յանձնուած են...

Վատագի Պ ա հ Ր ի փաշայի անգթութիւնները վանի մէջ չափ ու սահման չունին: Այս անարգ, կատաղած շունը յայտնապէս երկրին պատիժ դարձած է: Հայերը ամեն տեղ անարգուած են, երես չունին: Կառավարութեան դատարաններու մէջ թիւրքը բացարձակ կերպով կը պաշտպանուի: Զօրքերը առանց քաշուելու շուկային մէջ հայեր կը ծեծեն: Եթէ այս վերջիններ համարձակին բռնողէն, բռնակալ կուսակալը «ֆէսատներ» (խուլարար) ըսելով բանտը կը նետէ զանոնք: Հարկւր յիսունէն աւելի բանտարկեալներ ունինք: Բանտի մէջ եղած անգթութիւններ աննկարագրելի են: Բաւական է որ մէկը ձեռքերին իյնայ, ուղածին կրնան ըսել տալ անոր: Տասնէհինգ օրով անօթի թողուլ օրերով գլխի վայր կախել, մուրճով գլուխը ծեծել և իրենց ուղածին պէս գրուած թղթեր ստորագրել տալ, բոլորովին սովորական դարձած բաներ են: Թիւրք կառավարութեան թողած պակասը լրացնել սկսած է իր մատնութիւններով եւ իր քստմնելի անցեալով երեւելի եղող անբարոյական Պ օ Ղ ո ս եպիսկոպոսը: Այս անարգ վեղարաւորը, երբ յաջողեցաւ առաջնորդ ընտրուիլ, ձեռք ձեռքի տուած Պ ա հ Ր ի փաշային հետ քաղաքը գրեթէ տակն ու վրայ ըրաւ: Հերիք է որ մեկը իրեն հակառակի, անմիջապէս բանտ կը ձգուի, ինչպէս որ բանտարկել տուաւ քաղաքական ժողովոյ եւ Թաղական Խորհրդի նախկին անդամները: Այս անտանելի վիճակը բոլորովին սարսափեցուցած է մեզ. եւքի մը կըսպասենք. երանի՜ այդ օրը շուտ գար եւ անիշխանութիւնը շուտ գտնէր իր վախճանը:

ՎԱՍՊՊՈՒՐԱԿԱՆՑԻ

Հ Ե Յ Ո Յ Կ Ե Ն Ք Ի Յ

Ի ԶՄԻՆՈՒՆԻ ՅՈՒՐ ԶԵՂ

Այս վերջին երեք տարւայ ընթացքում, կաթողիկոսական ընտրութիւններից առաջ և յետոյ, հայկական մա-

մուլի մէջ կար մի ձայն միայն, որ պաղարիւն, արթուն ու հեռատես կերպով էր վերաբերվում դէպի կաթողիկոսական խնդիրը և Խրիմեանի Կովկաս գալուց ի վեր՝ դէպի նա, Կաթողիկոսը: Այդ ձայնը յՀնչակ-ինն էր: Կաթողիկոսական ընտրողական ագիտացիայի ամենատաք միջոցին նա նուիրեց այդ հարցին մէկ առաջնորդող. որ մինչեւ հիմա իր ընթերցողների յիշողութեան մէջ է և այսօր դէպքերի շնորհով մտաբերում ենք մենք ամենքս նրա ամեն-մի խօսքը: Այդ առաջնորդողում, ի միջի այլոց, այն միտքն էր յայտնվում, թէ ոչ բարոյական և ոչ իրաւական տեսակէտից չենք կարող կաթողիկոսից, ով որ էլ նա լինի, սպասել այն հասարակական գործունէութիւնը, որ ամբողջ հայ հասարակութիւնը կարծում էր, թէ կարող է ունենալ մէկ այնպիսի անձնաւորութիւն, որ ընտրվելով կաթողիկոս, հասկանում է իր կոչման նշանակութիւնը: Գա մի մարգարէութիւն չէր, այլ այդ միտքը հիմնված էր կաթողիկոսական պաշտօնի պարագաների և հայ հասարակական ներկայ պահանջների քննութեան վրայ: Եւ այդ պատճառով այն հետեւութիւնները, որ եղողացվում էին յՀնչակ-ի այդ յայտնած մտքից, այժմ իրագործվեցան մինչեւ անգամ այն անձի կաթողիկոսութեան օրով, որին ամբողջ հայոց մամուլն ու աղքն, իրանք էլ որոշապէս չիմանալով թէ ինչու, դարձրել են իրանց կուռքը:

Ամենքին յայտնի է, թէ ինչպիսի յոյսեր ունէին մեր ջոջերը Խրիմեանի վրայ և թէ ինչպիսի փառաւոր թափօրով, ովստաններով անձնական մեծագույն պարգեւներով և հայ հասարակութիւնը ստորացնող ձեւակերպութիւններով բերվեցաւ Խրիմեանը մինչեւ Եւփածին: Տեսնում ենք քառամեկէ էր եւ մենք ըզուր միտաբուշակում էինք այն, ինչ-որ այսօր իրականութիւն է: Կախմեծար համարեցինք առժամանակ չը շոշափել հասարակութեան կոյր երկրպագութիւնն այդ անձին և սպասել մինչեւ որ ինքն հասարակութիւնը զգայ իր արած քայլի բացասական նշանակութիւնը: Որքան մեծ եղաւ այդ հասարակութեան սարսափը, երբ Խրիմեանն իր օծումից յետոյ ցոյց տվեց մի զարմանալի ատելութիւն դէպի այն անձերը, որոնք եղան նրան կաթողիկոսացնողները և որոնք իրաւամբ մեր այստեղի հասարակութեան մէջ աղատամիտ կոչված տարրն են համարվում: Կաթողիկոսը, որ սկիզբները տեղիս ամեն կուսակցութիւնների համար ունէր մի-մի ժպիտ, քիչ վերջ միանգամից հեռացրեց իրանից աղատամիտներին, ամենաանպատիւ կարծիք յայտնելով նրանց մասին, և միանգամից ընդունեց յետադէմ, ինքնաբաւական մէկ ուղղութիւն: Այսօր նա շրջապատել է իրան այնպիսի անձերով, որոնք Գրիգոր Արծրունու սրամիտ խօսքով իրաւամբ կոչվում են «խաւարամիտներ», բացարձակ թշնամիներ հասարակական շահերի եւ ձգտումների: Այսօր նա շրջապատել է իրան նաեւ մութ և կամ տգեղ, կեղտոտ, անբարոյական անցեալի տէր անձերով, որոնց բացարձակապէս հովանաւորում է: Ի հարկէ, այդ պէտք է խիստ զայրացնէր աղատամիտներին, որոնք այդպիսով զրկվում էին գործերի վրայ ունենալիք աղղեցութիւնից, բանդված էին տեսնում իրանց բոլոր երազները, որպէս և զայրացրեց ընդհանրապէս հասարակութեան ողջամիտ, բարեխիղճ մասին: Այդ ժամանակներից սկսաւ առաջանալ ամենքի հիւսիսափումը: Բէական սկսվել էր, որ պէտք է դնար աւելի զարգանալով: Բաւական էր, որ հասարակութիւնը

սխալվել, որպեսզի քննադատական ոգին դեպի կաթո-
ղիկոսը նրա մէջ զարթոնէր: Բաւական էր, որ սկսվէր այդ
քննադատութիւնը, որպեսզի խրիմեանի վրայից կամաց-
կամաց թափվէին այն բարոյական զարգերը, որոնցով զու-
գեւէ էր նրան դիւրաճաւատ ժողովրդի երեւակայութիւնը:
Եւ օր օրի վրայ յԱսպուրական Արծուի՝ նախշուն թեւե-
րից մի-մի փետուր ընկնում էր: Անցնում էին ամիսներ,
զանազան կողմերից կուտակվում էին էջմիածնում անթիւ-
խնդրագրեր ու գործեր — բոլորը մնում էր անուշագիր:
Տարիներից ի վեր առկախ մնացած կրօնական, դպրոցա-
կան, ուսուցչական և այլ խնդիրներ մնում էին նոյն տար-
տամ դրութեան մէջ: Կաթողիկոսը շուտ-շուտ զանազան
գործերի համար մէկ օր մասնաժողով էր կազմում և միւս
օրը քանդում: Նոյն իսկ իր քթի տակ յԱրարատի՝ խըմ-
բադրական յանձնաժողովի մէջ տեղի էին ունենում վեճեր,
երկպառակութիւններ ու անկարգութիւններ: Ինքը Կա-
թողիկոսը բացարձակապէս հակառակ է հանդիսանում
գիտութեան եւ ծրագիրներ է կազմում էջմիածնի ձե-
մարանը զուտ կրօնական դպրոց դարձնելու, եւ արդէն
այդ նպատակով վերջերս սկսել է ազատամիտ կարծ-
ված ուսուցիչներին հեռացնել ձեմարանից: Եւ մինչդեռ
այդպէս գործերը մնացել են առկախ ու անկարգ եւ Կա-
թողիկոսի բռնած ուղղութիւնը յայտնվում է յետագէմ ու
միաստակար, նոյն իրան Կաթողիկոսի ճառերը, կոնգրեսնե-
րն ու քարոզները փայլում են երբեմն իրանց անբովան-
դակութեամբ, երբեմն իրանց յետադիմական ոգով, եր-
բեմն իրանց ժողովրդասէր արուեստական շեշտով ու խոս-
տովներով, որ միշտ մնում են անհետեւանք: Ինքը Կաթողի-
կոսը շարունակ վերջված է այցելութիւններ ընդունելով
և իր այցելութիւններին տված զարմանալի խրատներով ու քա-
րոզներով: Այսպէս չէ՞, տխուր հիասթափում այն ամ-
բողջ հասարակութեան համար, որ այնքան սպասեցին
գղեական շինքի, սպասելով իր Հայրիկից սրա մին-
չեւ հիմա արածների բոլորովին հակառակը և յայտնաբեր-
վելու ժողովրդին:

Թիւրքաց Հայաստանում տիրող սովի և բարբարո-
սութիւնների պատճառով Ալաշկերտի, Բասենի, Բուլանը-
խի գիւղերը կէսով ամայացել են եւ գաղթել դեպի այս
կողմ: Արջին հինգ ամսայ մէջ աւելի, քան 8000 հո-
գի եկած են այս կողմերը, ցրվելով Կարսի, Սուրմալուի
շրջականներում եղած այլ և այլ գիւղերում: Մայիսի վեր-
ջերը նրանք ստիպված են իրանց տեղերից հեռանալ:
Ղեկտեմբեր ամսին կառավարութիւնը հրամայեց Երե-
ւանեան նահանգից և այլ տեղերից նրանց արտաքսել դե-
պի Տաճկաստան, չը նայած, որ ձմեռը սաստիկ էր: Հրա-
մանը գործադրել սկսեցին, բայց շատ տեղերում ոստի-
կանութեան և ժողովրդի մէջ տեղի ունեցան կռիւներ:
Թշուառ գաղթականները չէին ուզում և կարողութիւն
էլ չունէին վերադառնալ իրանց երկիրը, մանաւանդ որ
այնտեղ նրանց սպասում էր տաճկի բռնակցը: Նրանք
մեծ քանակութեամբ եկան թափվեցան էջմիածին, յու-
տալով և աղերսելով Կաթողիկոսից օգնութիւն: Նրանց
վիճակը սարսափելի էր: Եւ ինչպէս օգնեց նրանց Կա-
թողիկոսը: Զարմանալի բան. նա չը դիմեց հասարակու-
թեան, նա չը փորձեց օրինական իրաւունքը ձեռք բերե-
լով, շուտափոյթ օգնութեան հասնել թշուառներին. նա
տեսաւ կառավարութեան հալածանքը, որին ենթարկված

էին այդ թշուառները և բաւականացաւ միայն նրանով,
որ էջմիածնում հաւաքված սովեալներին բաժանեց մի բա-
նի հազար ռուբլ եւ այնուհետեւ ամբողջ ամիսներ լուռ
անտարբերութեամբ վերաբերվեցաւ դեպի նրանց: Մի-
այն վերջերս, ստիպված զիջանելով հասարակաց տրտնջող,
դժգոհ կարծիքին, նա մի կոնգակ հրատարակեց սովի մա-
սին, բայց առանց որ եւ է միջոցի ձեռնարկելու այդ խո-
րին ցաւը գէթ փոքր-ինչ ամբելու համար: Եւ ինչ կա-
րող էր անել այն ողորմելի մի-մի ռուբլին, որ ստացան այս-
տեղ սովեալները, ոչ — դրանց միայն մէկ ամենաչնչին
մասը: Մինչդեռ ժողովրդի այդ թշուառութեան ժամա-
նակ Կաթողիկոսը հասարակութեան մէջ հազարաւոր ռուբ-
լիների յատուկ հանգանակութիւններ էր անել տալիս ի
նպաստ Երուսաղէմի ազգն աւերող վանքի: Եւ այդ-
անձը, որին ժողովուրդը Հայրիկ անուն է տվել, նոյն այդ
սոված ժողովրդին իր կոնգակում պատժական զգացում-
ներ յայտնելով էր բաւականանում և մի եւ նոյն ժամա-
նակ, կարծես թէ իր վրայ ընկնելը պատասխանատու-
թիւնից խուսափելով մի յատուկ կոնգակով էլ դիմում է
անում, որ ինչ, — ամբողջ ազգից առված և ամբողջ ազգե-
տեղ վատահամբաւ Խորէն պատրիարքին, կոչում անելով
նրան օգնել սովեալներին և դեպի նրանց հրաւիրել ողջ-
բարեհաճ ուշադրութիւն մեծի Կայսերն օսմ. պետու-
թեան՝ առաջի առնել զաղիորդով վիճակ ժողովրդեանս:
Մեր հայրիկը, տեսէք, դայլերին է պահ տալիս յոյսարի-
հօտը: Միեւնոյն ձգտումը դարձեալ նկատվում է Կա-
թողիկոսի հետեւեալ ընթացքի մէջ, որ ցոյց է տալիս եւս
իր անկարողութիւնը: Նա սկսել է բանակցութիւններ բա-
նալ Պարսկաստանի մէկ-երկու պարսիկ խաների հետ, այդ-
վերջինների հողերի վրայ բնակեցնել տալու համար սո-
ված գաղթականներին: Կարելի է երեւակայել թէ որքան
հաւանք ունի կր լինի այդ դիմումների իրագործումը
թիւրքահայերի համար, որոնք կը շտապեն, ի հարկէ կու-
րօքն, առանց ըմբռնելու իրանց քայլի նշանակութիւնը,
դեպի պարսկաց խաների այդ հողերը, Հայրիկի հրա-
ւիր աւելով — այդ նոր տեսակ աւերած ցեղի իր
Ահա՛ ձեզ նորանոր գաղթականութիւնների համար լայն-
կերպով բացված դռներ: Եւ այդ նախագիծ ունեցողն այն
մարդն է, որ այնքան քարոզել է գաղթականութեան դէմ,
այնքան հրաւիր աւելներ կարդացել և Աստուծոյ ա-
նունով անիծել գաղթողներին: Այդ նախագիծ իրագոր-
ծումը կը լինի մի սոսկալի աղէտ թիւրքահայերի համար,
որի պատասխանատուութիւնը նոյնքան սոսկալի է: Ահա-
թէ որոնք են այն բոլոր միջոցները, որոնցով Կաթողի-
կոսը յփրկում է սովեալներին, հայ ժողովրդին: Տխուր
վախճան: Մէկ էլ յանկարծ միւս կողմից, հրացանի գըն-
դակի նման, Ղարաբաղի գիւղից տեղեկագիր է գալիս Կա-
թողիկոսին, թէ եթէ շուտափոյթ օգնութեան և միջոց-
ների նա չը դիմէ, մօտ 36 գիւղ վճռել են կրօնափոխ-
վել, ընդունելով յունադաւանութիւն կամ մահմետակա-
նութիւն: Կրօնափոխութեան այդ որոշումն այժմից արդէն
մենք կարող ենք համարել իբրեւ իրագործված: Ահա՛,
ներկայ վիճակը և մեր Կաթողիկոսը:

Ղեկ, ինչ կասեն այժմ մեր այն բոլոր ջոջերը, կա-
թողիկոսական ընտրութիւնների միջոցին դուրս եկած
ոգեւորված բազմաթիւ ժամանակաւոր ագիտատորները,
որոնք այսօր իրանց շրթներն են կծում: Նրանք ինչեք

չարին Խրիմեանի համար... Ազգային... ներողութիւն մեր մեղքին, եթէ յիշեցնենք, որ նրանցից ոմանք ասում էին, ոչ միայն ազգային, այլ թէ «19-րդ դարի մի հանձար է, և, իբր այդպիսին, նա մէկն է (sic) իւր ժամանակի մարդկութեան լաւագոյն (sic) ներկայացուցիչներէն: Պարծանք հայութեան, — շարունակում է իր «գլուխը տաք» բացականչութիւններն այդ տողերի դրոշմը — «Նա պարծանք է համայն մարդկութեան»... եւ այլն... Դժանաբար, պարծանք մարդկութեան», որին սակայն խեղճ հայ ազգի խելքն էր միայն «ճանաչել» և ուրիշ ոչ մէկ ազգ նրա անունն էլ լսած չէր: «Պարծանք համայն մարդկութեան» — Մօլիէրի կատակերգութեան արժանի խօսք... Ի՞նչ կասեն դրանք այժմ իրանց այն ընթացքի մասին, որ, յենվելով բերանից բերան անցած մէկ անորոշ ժողովրդականութեան վրայ, նրանք այնպէս աստուածացրին այն մարդուն, որի կաթողիկոսական գործերն այսօր նոյն իրանք ստիպված են քննադատել եւ նրա վերայ նայել արթուն աչքով: Որքան դառնալիք է լինի նրանց սրտում: Նրանք պաշտամունքի առարկայ դարձրին մէկ անհատ. նրանք հայ ազգի բարօրութեան ու վերածնութեան նկատմամբ խուսափեցին հայութեան ներկայ կեանքի հանգամանքներում գործադրելիք «հասարակական ճշմարիտ աշխատութիւնից... իրանց ազգային ու մարդկային անյետաձգելի պարտականութիւններից» և իրանց բոլոր յոյսերն ու զեքիւններն մէկ անհատի վրայ: Նրանք չը ցանկացան ըմբռնել որ «ժամանակիս հանրամարդկային կենսական պահանջները... հայութեան հանրական շահերը, հասարակական բոլորովին այլ աշխատութեան, այլ գործունէութեան վրայ են մատնանիշ անում» *): Իւր նրանցից անկեղծներն ինքնախաբէութեամբ, իսկ շահագէտները դադարի դիտումներով «եկեղեցու բակում մղված կուսակցական կոիւնների մէջ ընկան նոյն մարդու համար, որ այսօր կաթողիկոս դարձած» յիւրաքանչեւ շատ ապերախտ, շատ անսիրտ կերպով է վերաբերվում դէպի նրանց: Մինչդեռ նոյն այդ կուսակցական կոիւնների եւ կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ թիւրբաց չայաստանի շատ վայրերն արեան մէջ էին լողում յեղափոխական ճգնաժամում եւ օգնութիւն աղբրում: Մեր ջոջներն այդ ժամանակ զբաղված կաթողիկոսական «ամենանշանաւոր» խնդրով. «Գամառ-Քաթիպաի յայտնի տղան էին ասում այդ աղբրողներին. — աղէկ է «ժամիցը տուն չի եկի», գնացէք, այժմ զբաղված ենք, յետոյ եկէք: Դէ, իրանց ցանածը այժմ թող հնձեն: Եւ որքան տեղն է հիմա յիշել «Հնչակի» նոյն առաջնորդողի հետեւեալ տողերը. «Եթէ դուք պահանջող էք ձեր լեզուի, խղճի, ազատութեան, դիմեցէք այնպիսի հասարակական գործունէութեան, որի առարկան լինի, ոչ թէ հոգեւորականութեան մտաւոր ու բարոյական զարգացման խնդիրը, ոչ թէ եկեղեցին, ոչ թէ կաթողիկոսի Սիմօն կամ Սարգիս լինելը, այլ ձեր գործունէութեան գլխաւոր առարկան թող լինի ընդհանուր հայութեան հասարակական կացութեան բարեկարգութիւնը, նրա

*) Չակերտներում դրված բառերն առաջ ենք բերում «Հնչակի» 1892 թ. Մարտ ամսւայ համարի վերջի շած առաջնորդողից: Ծ. Թղ.

մարդկային ու բաղադրական իրաւունքների ձեռք բերելը: Ունեցէք ուղղակի վերքի վրայ ձեռք դնելու քաղաքացիական արիութիւն: Այդ խօսքերն այժմ արդէն ժամանակ է հասկանալու: Ո՛չ սովի կը կորվէ ողորմելի լուսաներով, ոչ սովեալները հաց կունենան մէկ անգամ ստացած մի-մի ռուբլիով, ոչ գաղթականութիւնը կը դադարէ սենեակում արձակված աղաղակից եւ անգոր դայրայթից սրաւնրա դէմ: Ամբողջ Հայաստանը յեղափոխական կրակի մէջ է. ժողովուրդն օգնութիւն է ազդակում: Աչքը պէտք է այնտեղ դարձնել եւ հասարակութեան անկախ ինքնագործունէութեան հրաւիրել: Ահա պարտականութիւնն այն բոլոր հայերի, որոնք կարող են հասկանալ այդ պարտականութիւնը: Թողնենք մեռելներին իրանց մեռելներին թաղել. լենենք կենդանի եւ գնանք առաջ:

Թիֆլիս, 25 ապրիլի 1894.

ԿՈՎԱԿԱՅԻՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԱՔՍՈՒՏ ՍԽՅՈՆ ՊԵՅԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԻ ՄԱՍԻՆ

Կ. Պօլիս, 12 մայիս, 1894

Նախորդ նամակաւ խոստացած էի ձեզ գրել Մաքսուտ Սիմօն պէյի սպանութեան փորձի մանրամասնութեան մասին, ներկայիս կուգամ հաղորդել զայն:

Սպանիչներն են Ստեփան և Թագաւոր, երկու Սեբաստացիներ (տեղական թերթերը սխալմամբ Թագէտոս գրած են): Նազըմ պէյը լուր առածին պէս սպանութեան վայրը փութացած և հոն Մաքսուտի ճակատը համբուրած է... Հոն խոնոտող բազմութեան դառնալով՝ Նազըմ պէյը չափազանց դուրս է Մաքսուտ պէյին հանձարը: Նազըմի այդ ծառայ Մաքսուտ Սիմօն պէյը նոյն պահուհի հառաչելով իր եղբօրը Սէպուհ պէյին կտակ ըրած է, որ բնաւ ազգային գործերով չզբաղի և ինքզինքը օրինակ ցոյց տուեր է, թէ ինչպէս զոհ կըլլայ ազգին...

Մաքսուտի վիճակն այնչափ ծանր չէ. հաւանօրէն կաղատի, թէպէտ իր ցաւերը այնչափ վիճքը կը չարչարեն, որ «երանի» թէ, ըսել է, մէկ հարուածով վիս սպանէին, փոխանակ այսպէս չարչարելու:

Սիմօն պէյ ուզած է, այս դէպքին վրայ, բոլոր հայ հաստատութիւններուն և հայ պաշտօնական անձանց հետ իր յարաբերութիւնները խզել: Իր տղան, որ Ազգ. Կեդր. վարժարան կը յաճախէ՝ տուն կանչած է և հրամայած, որ այլ եւս հայու վարժարան չերթայ: Երէկ ուղած էին երկու սպանիչներն իրենց ցոյց տալ որպէս զի ատոնց նոյնութիւնը հաստատեն (թէպէտ անոնք ուրացած չէին), բայց Սիմօն պէյ չէ ուզած զանոնք տեսնել: Նազըմ պէյը հայ լըստես մը զրկած էր Մաքսուտի տունը՝ անոր որպիսութիւնը հարցնելու, Սիմօն պէյ գէշ ընդունելութիւն ըրած է անոր:

Պատրիարքը՝ սպանութեան փորձը ի Մաքրիգիւղ իր տան մէջ լսելով, այլ յայլմէ եղեր և շատ յուզուելով՝ նուազումներ ունեցեր է...

Մաքսուտի վերաւորուելով քաղ. ժողովը և իրեն հետ միատեղ միւս օժանդակ ժողովները կը քաշուին ասպարէզէն:

Քաղաքս վերջին ծայր յուզուած է: Ամբողջ օստիկանութիւնն ոտքի վրայ է, լրտեսներն ամեն կողմ կը վնտան. քա-

նի մը ձերբակալութիւններ եղան. կառավարութիւնը եր-
կիւղ ունի նորանոր գէպքերէ.

ԿԱՅԻՆ.

«Ա Պ Տ Ա Վ»

ԵՐԳԻՅԱԲԱՆԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱՆԴԵՍ

1-րդ տեսան «Ապտակ» թերթի երկու առաջին համարը: «Ապտակ» № 2, ապրիլի համարի առա-
ջին ամբողջ երեսի վրայ ղետեղված է մի նկար, որի
մէջ ներկայացվում է հայաստանի սովետների մի մեծ
ամբոխ, ծեր, տղամարդ, կին, երախայ, որոնք ամենքն էլ
տանջված գէմքերով պատառուտուն հագուստներով յու-
սահատ արտայայտութեամբ գաղթում են երկրից դուրս,
ճանապարհին շատեր մեռնելով: Միեւնոյն ժամանակ
նկարի ալքում, խորերում նկատվում են թիւրք զօրքեր,
որոնք իրանց հրացանները պատրաստի բռնած ունեն
սպառնական դիրքով: Նկարի գլխին գրված է՝ «Սով
Հայաստանում» և իսկ տակը՝ «Հիւանդ Մարգը հաւատա-
ցնում է. «Գաւառներում տիրում է կատարեալ խա-
ղաղութիւն և բարեկեցութիւն»: Մէկ առաջնորդողի հետ,
որի մէջ ներկայացվում են «Ապտակ» սկզբունքները, որ,
«Հնչակի» սկզբունքներն են և ողջութիւնը, կան մի
շարք մանր երգիծաբանական գրվածքներ եւ կրկին եր-
կու ծաղրանկար՝ բաղված մեր ազգային կեանքից:

«Ապտակ» բաժանորդագինն է ամեն տեղերի համար
տարեկան 5 ֆրանկ, կէս տարւան 3 ֆրանկ: «Ապտա-
կը» լքյս է տեսնում ամիսը մէկ անգամ: «Ապտակին»
դիմել «Հնչակի» հասցէով—

Athènes (Grèce).—M. Beniard. Poste restante.

Կուսակցութեանս Գանձարանում շնորհակալութեամբ
առաջվել են հետեւեալ դոււարները.—

ԱՄԵՐԻԿԱ. Հէվըրհիլի Հնչակեան Մասնաճիւ-
ղից 100 դոլար, որ հանգանակված է հետեւեալ ան-
ձերի մէջ. Մ. Մ., Ս. Պ., Կ. Յ., Վ. Բ., Յ. Բ., Ս. Կ., Կ. Գ.
Թ., Մ. Յ., Ապառաժ, Ա. Տ., Ս. Ու., Ե. Կ., Ն. Զ., Եղ-
բայրներ Զ., Գ. Պ., Պ. Կ., Մ. Թ., Ա. Մ., Ա. Կ., Յ. Ժ., Պ.
Պ., Գ. Գ., Ա. Բ., Ա. Լ., Կ. Մ., Ս. Յ., Ոմի, Տ. Ա., Ա. Թ.,
Կ. Ա., Մ. Ս., Ս. Ա., Մ. Գ. (Բ.), Ե. Օ., Ն. Մ., Գ. Օ., Աս-
լան, Կ. Ա., Ա. Մ., Կ. Թ., Յ. Ս., Հայրենասէր, Գ. Պ. կըր-
կին Հայրենասէր եւ Գ. Գ.:

Ֆրէզէն քաղաքից Մ. Յ. եւ Մ. Ռ. ձեռքով
հանգանակված 19 դոլար 50 սէնտ. նուիրատուներն են.
— Յար. Գ. Ս. 5 դոլ., Յակ. Էժտէր, Հաճի Յով. Առա-
քել եւ Յար. Առաքել 2-ական դոլ. Ն. Գ., Էթմէքճի,
Տ. Ա., Յ. Էթէճ, Պատ. Ա. Վարդ, Ս. Մ., Տօք. Պ., Գ. Ս. և
մի Հայ զինուոր մի-մի դոլ.: Մանի 50 սէնտ:

Լ. օրէնս քաղաքի Հնչակեան Մասնաճիւղից 63
անգլիական ոսկի եւ 3 շիլին:

Լ. ին (Մէսս.) քաղաքի Հնչակեան Մասնաճիւղի ձեռ-
քով հանգանակված 465 դոլար եւ 90 սէնտ. նուիրա-
տուներն են. — Յ. Ա. 23 դոլ.— Մ. Ն. (Էթէ) եւ Գ.
Էլ 20-ական դոլ.— Յ. Ա. 17 դոլ.— Ա. Մ. 16 դոլ.
50 ս.— Մ. Կ. (Հուր) 16 դոլ.— Կ. Լ., Յ. Ս. (Կիսասող),
Կ. Զ. եւ Յ. Բ. 15-ական դոլ.— Ա. Վար. եւ Յ. Գր. 13
—ական դոլ.— Մ. Պետ., Մ. Է., Կ. Է., Ս. Գր., Ա. Ժ., Վար.

Գ. եւ Կար. Վ. 10-ական դոլ.— Այլ եւ այլ անձեր
9 դոլ. 83 ս.— Յար. Սիմ. (Մյէհ) եւ Մել. Կ. 8-ական
դոլ.— Ալ. Յով. եւ Օ. Ն. 7-ական դոլ.— Յար. Բ. եւ
Ա. Մ. 6-ական դոլ.— Վահ. Գ., Պետ. Պ., Տիգրան, Յար.
Կ., Ման, Յար. Բ., Կիր. Մ., Յակ. Ժ., Ոմի, Յով. Վ., Ղ. Ս., և
Ստեփ. Ա. 5-ական դոլ.— Խ. Մարգ եւ Մուշեղ 4-ական
դոլ.— Ալ. Ար. 3 դոլ. 7 ս.— Ս. Պէր., Արիւն եւ Պող. Պ.
3-ական դոլ.— Յար. Ս., Յ. Փ., Արթ. Է., Գր. Ա., Պետ-
րոս, Կար. Ե., Մյէհ, Կ. Ման, Կ. Ղ. Փ. Մ. Եղ. Ա., Կար-
Տ., Յ. Տ. Յ., Մար. Շ., Սեդ. Ե., Ան. Մ., Մ. Գաս., Ս. Խ.
եւ Մ. Ար. 2-ական դոլ.— Ա. Մաղ., Պ. Օ., Յ. Ալ., Եղ-
Ա., Յ. Ս., Մ. Գ., Մ. Մ., Յ. Տ. Ղ., Ա. Բ., Սեդ., Կ. Ն., Գ. Ս.,
Կ. Մ., Յ. Սիմ., Ոմի, Յ. Խ., Գ. Պ., Տ. Ա., Յ. Մ., Մ. Միւ.,
Կ. Պ., Մուշեղ, Մ. Միւ., Պ. Ս., Պ. Տ. եւ Սեդ. Ն. մի-մի
դոլ.— Ոմի 50 սէնտ:

Օրէնի Հնչ. Մասնաճիւղից Ա. Յոբելեանի ձեռ-
քով 35 դոլար:

X. քաղաքից M. P. St.-ից 1 դոլ:

ԱՆԳՂԱ. Լ. օրէնից բժիշկ Բ.-ից 10 անգլ. ոսկի:
Թիւրքիւ. X. քաղաքից՝ Թիւրքատեացից 100 ֆրանկ.
Կ. Պ.-ից Բ. Բ.-ից 20 ֆր., Գրանսուաից 1 օսմ. ոսկի,
X.-ից 7 դրախմ: Զմիւռնիայից, Ազատութեան
սուրբ Գործին՝ Խալին և ընկերք 50 ֆր.:

ԵԳԻՊՏՈՍ. Ա. քաղաքից, Գարհատի միջոցով հանգա-
նակված՝ 107 ֆր., 50 սանտիմ:

ՌՈՒՍԼԱՆՍ. Մ. քաղաքում երիտասարդութեան մէջ
հանգանակված գումարից 80 ռուբլ. Նով. Բ.-ից Բ.-ից
3 ռուբլ.: Ֆիւնլանդիայի Հէլսինգֆորս քաղաքից Յ.
-ից 5 ֆրանկ: ԲՕԼԳԵՐԻԱ. Բ. Գ.-ից 20 ֆրանկ: ՅՈՒ-
ՆԱՍՏԱՆ. Վ. օրէնից 5 դրախմ:

Հրատարակութիւն Հնչակեան Կուսակցութեան

Լ օր տեսաւ № 10 քաղաքի.

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ԳԷՄ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԳԱՂԱՏԻԱՅԻ. ՀԻՆԳ ԶԱՌ ԱՄԲԱՍ-
ՏԱՆԱԿԱՆԵՐԻ. ԳԱՂԱՏԻԱՅԻ ԻՐ ՀՐԱՍԿԱՅՔՈՎ՝

ԵՒ ՍԵՐԱՍՏԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ԴԵՊԵՐԸ:

ԲԱՆՏԱՅԻՆ ՎԵՐԱՍՏԻԱՅԻ ԶԱՅ ՅԻ-

ՂԱՓՈՒԼԿԱՆ ԱՍՊԱՏԱԿԻ. ԿԱ-

ԽԱՂԱՆԻ ՏԱԿԻՑ.

Գինը 1 ֆրանկ.

Վ. օրիպակ.— «Հնչակի» նախորդ № 6-ում, Կիլի-
կիայի թղթակցութեան գլխին գրված է՝ 7 ապրիլ 1893.
պէտք է լինի՝ 7 ապրիլ 1894:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ
և դրամ ուղարկել հետեւեալ հասցէով.—

Athènes. (Grèce).—M. Beniard. Poste restante.

Աթէնք.

Հայկական ազատ տպարան.